

## ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՎԹՎԱԾ Է ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ



՝Freedom House՝ եւ ՝Human Rights Watch՝ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների՝ 2009-ին Հայաստանում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ զեկույցները պետական մարմինները եւ պաշտոնյաները մի տեսակ չտեսնելու տվեցին:

Սակայն, վերջին օրերին եղան դեպքեր, երբ հայաստանյան իրավապաշտպան

կազմակերպությունների ներկայացուցիչները սկսեցին իրենց միջազգային գործընկերներին մեղադրել

կողմնակալության մեջ: ՝Freedom House՝-ի եւ ՝Human Rights Watch՝-ի զեկույցների եւ դրանցում

Հայաստանում մարդու իրավունքների վատթար վիճակի վերաբերյալ գնահատականների եւ

որակումների վերաբերյալ մեկնաբանություններ խնդրեցինք Թրանսփարենսի ինթերնեյշնլ-

հակակոռուպցիոն կենտրոնից հայկական գրասենյակի նախագահ Ամալյա Կոստանյանից:

**- Տիկին Կոստանյան, Հայաստանում մարդու իրավունքների վատթար վիճակի վերաբերյալ ՝Freedom House՝ եւ ՝Human Rights Watch՝ իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցներում բերված գնահատականների հետ դուք համամի՞տ եք:**

- Մենք նույնիսկ ավելի խիստ գնահատական կտայինք: Ես կասեի, որ զեկույցներում բերված գնահատականները իրականությանը մոտ են:

**- Ինչպե՞ս եք գնահատում այն փաստը, որ ՝Freedom House՝-ի կողմից Հայաստանում մարդու իրավունքների ազատության վիճակին տրված գնահատականը, նույն այդ կազմակերպության փորձագետների գնահատմամբ, հավասարազոր է, ասենք, զինվորական խունտաներին, ռազմական դիկտատուրաներին տրվող գնահատականներին:**

- Մեր երկիրը գնում է այդ ուղղությամբ: Սա այն իրավիճակն է, երբ մի խումբ մարդիկ կառավարում են ողջ երկիրը եւ որոշումներ են կայացնում՝ ի շահ իրենց: Կարելուր չէ՝ դա ինչպես կկոչվի: Խոսքն այն

մասին է, որ պետությունը զավթված է մի խումբ մարդկանց կողմից, լինի դա խումբատե, լինի դա քաղաքական էլիտան: Պետությունը կարող է զավթված լինել ասենք բարձրաստիճան գինվորականների մի խմբի կողմից եւ կոչվել խումբատե, ձեռներեցների կողմից եւ կոչվել օլիգարխիկ եւ պարզապես քաղաքական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից: Երբ ասում ենք պետությունը զավթված է, դա նշանակում է, որ երկրում բոլոր որոշումները կայացվում են այդ խմբի կողմից, որը շատ հեռու է ժողովրդավարությունից եւ ժողովրդի շահերը ներկայացնելուց: Մեր մոտ խումբատե չէ: Մեր մոտ գոյություն ունի այդ բոլորի՝ տնտեսական, ռազմական եւ քաղաքական շահերի սերտաճում, որին հավանաբար անհրաժեշտ է, ինչ-որ յուրահատուկ անվանում տալ, որովհետեւ մեզ մոտ ֆորմատն այլ է:

**- Ինչպե՞ս կմեկնաբանեք այն հանգամանքը, որ Հայաստանի իրավապաշտպան կազմակերպությունների կողմից արդեն կարծիքներ են հնչում, որ ՀՀ կառավարությունը պետք է դատի տա միջազգային իրավապաշտպան կազմակերպություններին՝ սուբյեկտիվ գնահատականներ տալու համար:**

- Ես չեմ կիսում այն տեսակետը, որ միջազգային կազմակերպությունները իրենց եզրակացություններում Հայաստանին քննադատում են, որպեսզի միայն ճնշում գործադրեն Հայաստանի վրա: Եկեք թույլ չտանք, որ մեզ մոտ վիճակն այնպիսին լինի, որ մեզ նման գնահատականներ տան, որ մեզ խայտառակեն: Ես չեմ կարծում, որ նման զեկույցներ գրողները այնքան ոչ պրոֆեսիոնալներ են, որոնք լրիվ սուտ են ներկայացնում: Առավել եւս, որ երբ այդ զեկույցները ընթերցում ես տեսնում ես, որ այնտեղ կոնկրետ փաստերով ամեն ինչ թվարկված է. 17 քաղբանտարկյալ, ընդդիմության ակտիվիստների ծեծ եւ ձերբակալություն, դատական գործ բնապահպանի նկատմամբ, դիտորդի ձերբակալություն եւ այլն: Այսինքն, զեկույցներում շատ կոնկրետ փաստերը ներկայացված են, եւ մենք չենք կարող ասել, որ այդ ամենը սուտ է, որովհետեւ մեր աչքերով ենք այդ ամենին ականատես եղել եւ լինում: Այլ է, որ բացարձակ օբյեկտիվ գնահատական կարծում եմ, որ ոչ մի կազմակերպություն չի կարող տալ: Ես ինչ-որ չափով համաձայն եմ, որ երբ ձեռնադրում է այս կամ այն գերտերությանը, իհարկե, նրանք սկսում են ավելի մեծ ճնշում գործադրել՝ օգտագործելով այդ գնահատականները: Սակայն, չի կարելի այդպես պրիմիտիվ դիտարկել, որ ահա պատվեր է, սուտ են ասում, որ կարողանան խայտառակել Հայաստանին: Մենք ենք թույլ տալիս, որ մեզ խայտառակեն: Եթե միջազգային կառույցները երկու տարի առաջ աչքերը փակել էին եւ չտեսնելու էին տալիս նախագահական ընտրություններում տեղի ունեցած իրադարձությունները, նույն միջազգային կազմակերպությունները ընտրությունները գնահատել էին եվրոպական չափանիշներին համապատասխանող, ապա Մարտի 1-ի իրադարձություններից հետո

նրանք ստիպված էին ուշադրություն դարձնել մարդու իրավունքների ոտնահարումների եւ քաղաքական հետապնդումների վրա: Այսինքն, ճշմարտությունից հնարավոր չէ խուսափել: Եկեք այնպիսի իշխանություն ունենանք, որոնք թույլ չեն տա, հնարավորություն չեն տա ճնշումներ գործադրել մեր երկրի վրա: Եթե իսկապես ցանկանում ենք, որ մեր մասին լավ զեկույցներ լինեն, ապա եկեք իրավիճակը շտկենք, եկեք քաղբանտարկյալներ չունենանք, եկեք խոսքի ազատություն ունենանք, եկեք արդար դատավարություններ ունենանք:

**- Ի վերջո, ո՞րն է ճիշտ՝ հաշվի առնելով Հայաստանի շուրջ տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումները մարդիկ պիտի դադարեն մեր իրականության մասին խոսել եւ պայքարել երկրում ստեղծված իրավիճակը փոխելու համար, թե հակառակը՝ ժողովրդավար Հայաստանի համար շահագրգիռ անձինք պետք է ավելի մեծ եռանդով պայքարեն:**

- Այո, պետք է մարդիկ խոսեն Հայաստանում տիրող իրավիճակի մասին եւ դրա դեմ պայքարեն: Ես ավելի կողմնակից եմ հիվանդին ճշմարտությունը ասելուն: Մենք ինքներս մեզ պետք է խոստովանենք, որ երկրում լուրջ խնդիրներ ունենք, եթե դրանք ցանկանում ենք լուծել: Միշտ կարելի է ասել եկեք թաքցնենք ճշմարտությունը, բայց միեւնույն է դա չի հանգեցնելու խնդրի լուծմանը: Մենք կարող ենք թաքցնել ու չբուժել մեր հիվանդությունը, եւ հետո ինչ, մահանանք: Հետո ինքն իրեն ինքնամաքրում չի լինի, ինքնաբուժում չի լինի: Ճշմարտությունը, նույնիսկ դաժան ճշմարտությունը ավելի լավ է, քան կոծկելը, որը բերում է անպատժելիության, ինչն այսօր տիրում է Հայաստանում: Ղեռ անհրաժեշտ է պարզել, թե ով է ավելի շատ սիրում իր երկիրը, այն մարդը ով ասում է ճշմարտությունը՝ թեկուզ դաժան, եւ ցանկանում է փոխել այն, թե այն մարդը ով ցանկանում է թաքցնել իրականությունը:

*Վահագն Հովակիմյան -*

*Հունվար 23, 2010*